ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

***ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ***

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

08.05.2018թ.

## ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցողը ներկայացրեց Ենոքավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը: Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 26.04.2018թ. թիվ 01/16.2/2550-18 հանձնարարականը

Ավագանին որոշում է.

1.Հաստատել Ենոքավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է.Ավետիսյան | | | |
| Հ. Ավետիսյան | | | |
| Հ. Մկրտումյան | | | |
| Գ. Օրբելյան | | | |
| Ա. Օրբելյան | | | |

Ենոքավան համայնքի

ղեկավար Ա.Չիբուխչյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ն
08.05.2018թ.

### ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Ենոքավան համայնքի բյուջեի 2018 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի և ծախսերի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետը համայնքի ավագանին ընդունում է ի գիտություն համայնքի ղեկավարի ներկայացրած 2018 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի հաղորդումը`

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ԿԱՏԱՐՄԱՆ 0/0 |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 650,0 | 634,8 | 97 |
| 2 | Գույքահարկ | 430,0 | 269,0 | 62 |
| 3 | Տեղական տուրք | 25,0 | 1,0 | 4 |
| 4 | Վարձակալական հողեր | 300,0 | 293,6 | 97 |
| 5 | Աղբահանության վճար | 169,0 | 72,2 | 42 |
| 6 | Դոտացիա | 1890,0 | 1890,0 | 100 |
| | Ընդամենը | 3464,0 | 3160,6 | |

| | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀՈԴՎԱԾՆԵՐ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 4111 | 2550,0 | 2366,4 |
| 2 | էներգիա | 4212 | 90,0 | 69,6 |
| 3 | բենզին | 4264 | 120,0 | 80,0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | ՀՀՄ | 4819 | 60,0 | 60,0 |
| 5 | Պարտադիր վճար | 4823 | 10,0 | 4,2 |
| 6 | Աշխատավարձի պարգևատրում | 4112 | 150,0 | 0 |
| 7 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 200,0 | 200,0 |
| 8 | Վարչական սարքավորումներ | 5122 | 700,0 | 0 |
| 9 | Շենք-շին. Կապիտալ վերանորոգում | 5113 | 690,0 | 0 |
| 10 | Այլ մեքենաներ, սարքավորումներ | 5129 | 950,0 | 0 |
| 11 | Աղբահանություն և սան. մաքրում | 4212 | 150,0 | 150,0 |
| 12 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 50,0 | 0 |

Ավագանու անդամներ

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Լ.Ավետիսյան | | | |
| Հ. Ալեքսանյան | | | |
| Հ. Մկրտումյան | | | |
| Գ. Օրդինյան | | | |
| Ա. Օրդինյան | | | |

Ենոքավան համայնքի

ղեկավար Ա.Չիրուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

***ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ***

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

08.05.2018թ.

## ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ՀԱՍՏԻՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Նշվեց, որ 2017թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված և ՀՀ նախագահի ստորագրմամբ ներկայացված <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Անասնաբուժության մասին>> օրենքների կիրարկման ապահովվելու նպատակով համայնքում սահմանել համայնքը սպասարկող անասնաբույժի հաստիք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 50 րդ հոդվածի և <<Անասնաբուժության մասին>> օրենքի դրույթներով

Ավագանին որոշեց.

Տալ համաձայնություն Տավուշի մարզի Ենոքավան համայնքում սահմանել համայնքը սպասարկող անասնաբույժի հաստիք դրույք՝ 60000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ դրույքաչափով:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է.Ավետիսյան | | | |
| Հ. Ավետիսյան | | | |
| Հ. Մկրտումյան | | | |
| Գ. Օրդինյան | | | |
| Ա. Օրդինյան | | | |

Ենոքավան համայնքի

ղեկավար Ա.Չիբուխչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Ենոքավան համայնքի ավագանի

*08 մայիսի 2018թ. ԹԻՎ 06* ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ, ԵՆՈՔԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԿ ՄԻԱՎՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ Ենոքավան համայնքի վարչական տարածքում, քաղաքացի Բենիկ Անուշավանի Ավետիսյանի կողմից ինքնակամ կերպով, համայնքային սեփականություն հանդիսացող 20,3քմ մակերեսով հողամասի վրա կառուցվել է 20,3քմ արտաքին մակերեսով առևտրի սրահ:
Համաձայն ՀՀ կառավարության 19.01.2006թ. թիվ 118-Ն որոշման առևտրի սրահի զբաղեցրած 20,3քմ մակերեսով տարածքը Ենոքավան համայնքին է փոխանցվել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի մաս /ծածկագիր 11-028-0037-0005/, ուստի ինքնակամ կառույցի և նրա զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակը որոշելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել փոխել 20,3քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը:
Սույնով խնդրվում է տալ համաձայնություն, Ենոքավան համայնքի վարչական տարածքում, քաղաքացի Բենիկ Անուշավանի Ավետիսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 20,3քմ արտաքին մակերեսով առևտրի սրահ զբաղեցրած, համայնքային սեփականություն հանդիսացող 20,3քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխելու համաձայնություն ստանալու նպատակով լիազոր մարմին ներկայացնելու համայնքի ղեկավարի առաջարկությունը:
Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 3 հոդվածի, ՀՀ ,,Տեղական

ինքնակառավարման մարմինների մասին,, օրենքի 18-րդ հոդվածի թիվ 29 և թիվ 31 կետերի պահանջներով,

Ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն Մրգավան համայնքի վարչական տարածքում, քաղաքացի Բենիկ Անուշավանի Ավետիսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 20,3քմ արտաքին մակերեսով առևտրի սրահ զբաղեցրած, համայնքային սեփականություն հանդիսացող 20,3քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխելու համաձայնություն ստանալու նպատակով՝ լիազոր մարմին ներկայացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Չի մասնակցել |
|---|---|---|---|---|
| 1.Հ. Մկրտումյան | | | | |
| 2.Հ. Ավետիսյան | | | | |
| 3.Գ. Օրդինյան | | | | |
| 4.Ա. Օրդինյան | | | | |
| 5.Է. Ավետիսյան | | | | |

ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

08.05.2018թ.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՇՈՏԻ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Նշվեց, որ դիմում է ստացվել համայնքի բնակիչ Արմեն Փաշինյանից՝ իրեն բազմանդամ ընտանիքը համայնքի մանկապարտեզի շենքից սենյակ տրամադրելու մասին: Քանի որ նրա 10 հոգուց բաղկացած ընտանիքը բնակվում է նույն մանկապարտեզի 45քմ բնակտարածքում, իսկ հարևանությամբ գտնվող սենյակի ազատ է, ուստի հարցին դրական լուծում տալով Արմեն Աշոտի Փաշինյանին տրամադրել մեկ սենյակ:

Ավագանին որոշեց.

Տալ համաձայնություն Տավուշի մարզի Ենոքավան համայնքի բնակիչ Արմեն Աշոտի Փաշինյանի բազմանդամ ընտանիքին մանկապարտեզի շենքից մեկ սենյակ տրամադրելուն:

Ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է.Ավետիսյան | | | |
| Հ. Ալեքսանյան | | | |
| Հ. Մկրտումյան | | | |
| Գ. Օրդինյան | | | |
| Ա. Օրդինյան | | | |

Ենոքավան համայնքի

ղեկավար Ա.Չիբուխչյան